



Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
01.07.2013 թ. (արձանագրություն № 14)

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

Բողոքարկման կարգը ուղղված է ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքի գնահատման (գնահատականի) վերանայմանը:

Ուսանողը պետք է գիտակցի ստացած գիտելիքի գնահատման անհրաժեշտությունը, որն ուղղված է նրա կողմից ձեռք բերած ունակությունները բացահայտելուն:

Ուսանողի ունակությունների գնահատումը պետք է լինի առավելագույնս հստակ և թափանցիկ:

Դասավանդողը պարտավոր է ուսանողին տեղեկացնել և ծանոթացնել դասընթացին ուղղված գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին:

Դասավանդողը պարտավոր է օբյեկտիվ գնահատել ուսանողին՝ ըստ ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների և ապահովել ուսանողին անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Գնահատման համակարգը պետք է ապահովի ուսանողի գիտելիքների օբյեկտիվ գնահատումը:

Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար համալսարանում սահմանվում են քննությունների գրավոր և բանավոր ձևեր:

Ուսանողը պետք է հստակ տեղեկացված լինի գնահատմանը ուղղված իր իրավունքներին և պարտականություններին.

- տեղեկացված լինի գնահատման սկզբունքներին և ձևերին,
- իմանա գնահատման բոլոր բաղադրիչները,
- իմանա յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը ընդհանուր գնահատականի վրա:

Ուսանողը գնահատվում է ըստ առարկայի համար սահմանված գործոնների, որոնցից են՝ ակտիվության դասերին, կատարած անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարողականը, միջանկյալ և վերջնական քննությունները:

Քննող դասախոսը կամ քննական հանձնաժողովը պարտավոր են ուսանողների գիտելիքների գնահատումը կազմակերպել և իրականացնել օբյեկտիվ և թափանցիկ ձևով:

Ուսանողի կողմից գրագործության փորձ անելու դեպքում չեղյալ են համարվում քննական տեսքում կատարած գրառումները:

Վերջնական գնահատականի հիմքն են հանդիսանում բոլոր բաղադրիչներով հավաքված միավորները:

1. *Ուսանողը իր գնահատականից բավարարված չլինելու դեպքում իրավունք ունի այն բողոքարկելու.* կարող է բողոքարկել անհատական և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և վերջնական քննությունների գնահատականը:
2. *Ուսանողը բողոքարկման իրավունք ունի՝*
 - եթե գնահատումը ոչ օբյեկտիվ է,
 - եթե դասավանդողի կողմից կատարվել է գնահատման անհատականություն,
 - գնահատողը չունի բավարար փորձ և հմտություն ուսանողին գնահատելու համար:
3. *Գնահատականով չբավարարված ուսանողը կարող է դիմել ֆակուլտետի դեկանին՝ նրա գիտելիքները հավելյալ գնահատելու խնդրանքով:*
4. *Գրավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող բողոքարկումը պետք է անձամբ ներկայացնի գրավոր տեսքով ոչ ուշ, քան գնահատականը հայտարարելուց մեկ օր հետո: Բողոքարկումը նշվում է դեկանատի կողմից հատուկ մատյանում:*
5. *Բանավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող, առանց լսարանից հեռանալու, իրավունք ունի խնդրել քննասենյակ հրավիրել ֆակուլտետի դեկանին և սվյալ ամբիոնի վարիչին՝ գնահատման վերաբերյալ բողոքարկում ներկայացնելու համար:*
6. *Բողոքարկման դեպքում դեկանի կողմից ստեղծվում է բողոքարկման հանձնաժողով: Բողոքարկման հանձնաժողովը նորից ստուգում է ուսանողի աշխատանքը և լսում ուսանողի կողմից առարկային վերաբերող թեմաների ներկայացումը:*
7. *Բողոքարկումը և գնահատումը հանձնաժողովի կողմից պետք է լինեն օբյեկտիվ և թափանցիկ: Արդյունքում գնահատականը կարող է ինչպես բարձրացվել, այնպես էլ իջեցվել կամ թողնել առանց փոփոխության:*

8. Հանձնաժողովի կողմից նշանակված գնահատականը վերջնական է: Այն նշանակվում է առանձին ուղեգրի մեջ և կցվում ընդհանուր քննական թերթին, հավելյալ նշվում է կատարվում ստուգման գրքույկում: Կազմվում է բողոքարկման հանձնաժողովի արձանագրություն:
9. Բողոքարկումը չեղյալ է համարվում եթե՝
- դիմումի մեջ շոշափված են “Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման կանոնակարգի” և գնահատման չափանիշների հետ կապված հարցեր:
 - դիմումի մեջ ուսանողը պատճառաբանում է իր առողջական խնդիրները:
10. Ամփոփիչ ատեստավորումից (ավարտական պետական քննություն, դիպլոմային նախագծի/աշխատանքի պաշտպանություն) ստացած գնահատականի բողոքարկումն իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2011թ.-ի հոկտեմբերի 31-ի № 1197-Ն հրամանով հաստատված “Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի” 33-րդ կետի: